ՍՐԲ. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ ՄԱՅՐ ՏԱՃԱՐ
CATHÉDRALE ARMÉNIENNE ST. GRÉGOIRE L'ILLUMINATEUR ST. GREGORY THE ILLUMINATOR ARMENIAN CATHEDRAL

3 Մարտ 1972

ԳԵՐԱՇՆՈՐՀ
ՏԷՐ ԹՈՐԳՈՄ ԱՐՔ ՄԱՆՈՒԿԵԱՆ
Առաջնորդ Ամերիկայի Թեմին
Եւ Նախագահ Թեմական Խորհուրդի
ՄԻԱՑԵԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐ

Գերաշնորհ Սրբազան Հայր,

Ս Գրիգոր Լուսաւորիչ Հայց Առաքելական Եկեղեցւոյ տարեկան ԾԽԱԿԱՆ ԺՈՂՈՎԸ գումարուեցաւ Կիրակի Փետ 27, 1972 ին Կ.Ե. ժամը 3:00 Եկեղեցւոյ Գարիպեան Սրահին մէջ: Որպէս Հովիւ բացման աղօթքը մատուցուեցաւ մեր կողմանէ:

Ութսուն տրատու անդամներու ներկայութեան տեղի ունեցած ժողովին դիւանի անդամներ ընտրուեցան Տոքթ. Արշաւիր Կէօնճեան Ատենապետ, Տկն Վարդուհի Պալեան եւ Պ. Միսաք Կուտսուզեան ատենադպիրներ:

Ժողովը բացառիկ գոհունակութեամբ դիմաւորեց Ծխական Խորհուրդին կողմէ նախապէս տպագրուած ու անդամներուն ղրկուած տեղեկատուութիւններու գրքոյկները, որոնցէ հատ մը կուղարկենք Ձերդ Սրբազնութեան:

Սոյն ժողովի ընթացքին օրինաւոր քուէարկութեամբ Ծխական Խորհուրդի պաշտօնէ դադրող 4 անդամներու տեղ ընտրուեցան Տիարք Առաքելեան Առաքել, Պասմաճեան Արթօ, Էսէն Պերճ եւ Մուրատեան Փոլ:

Վերոյիշեալ անունները Ձերդ Սրբազնութեան վաւերացման կուղարկենք:

Մատչելով ի համբոյր Ձեր Ս Աջոյն

Մամիկոն Քհնյ Ոսկանեան
Հոգեւոր Հովիւ

615 STUART, MONTREAL 154, QUE. TEL. (514) 279 3066